ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարար Սեյեդ Մոհամմադ Հոսեյնիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատար Համիկ Պողոսյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ երկու երկրների միջեւ առկա ջերմ հարաբերություններն առաջընթաց են ապրում եւ գործնական արդյունքներ արձանագրում: Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ երկու երկրների մշակույթի նախարարությունների միջեւ սերտ համագործակցության կարեւորությունը՝ նշելով, որ այն նպաստում է երկու ժողովուրդների մշակութային կյանքի փոխադարձ հարստացմանն ու զարգացմանը:

Անդրադառնալով Իրանի հայկական համայնքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի դեմս Մոհամմադ Հոսեյնիի իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին՝ ինչպես հայ ժողովրդի զավակների նկատմամբ ցուցաբերվող ջերմ վերաբերմունքի, այնպես էլ հայ հոգեւոր-մշակութային արժեքների, մասնավորաբար եկեղեցիների հանդեպ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց նաեւ Մայր Աթոռի եւ Հայաստանում Իրանի դեսպանատան միջեւ առկա համագործակցությունը մշակութային ոլորտում:

Զրույցի ընթացքում կարեւորվեց միջկրոնական երկխոսությունների խթանումը՝ ի բարօրություն մարդկության խաղաղ կյանքի, ինչպես նաեւ հոգեւոր կենտրոնների հարաբերությունների սերտացումը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿԻՆ

Ապրիլի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Անդրկովկասում պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկուն:

Հանդիպմանը Մարեկ արքեպիսկոպոսն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Հռոմի Ֆրացիսկոս պապի նամակը, որով Սրբազան Քահանայապետը շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին իր ընտրության առիթով հղված շնորհավորական գրության, ինչպես նաեւ գահակալության արարողությանն անձնապես ներկա գտնվելու համար: «Առանձնակի ուրախություն էր ինձ համար կարողանալ ողջունել Ձեզ Հռոմում իմ առաքելության գահակալությանը…: Ակնկալում ենք շարունակել զորացնել